Կեչուտ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արտակ Բագրատյան

Հեռախոս՝ +37493839373

Կեչուտ գյուղը գտնվում ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում, Արփա գետի վերին հոսանքում, նրա ձախ ափին, Ջերմուկ քաղաքից 3 կմ հարավ: Ծովի մակերևույթից գտնվում է 1900 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 46 կմ է, մայրաքաղաքից՝ 170 կմ: Կեչուտի ջրամբարի կառուցման պատճառով գյուղը տեղափոխվել է փոքր-ինչ վերև:

Գյուղի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն պատմագրությունը վկայում է, որ գյուղը, որպես բնակավայր, գոյություն է ունեցել Ք.ա. 2-րդ հազարամյակից: Ունի հազար տարուց ավելի պատմություն, երբեմն գործել է տարբեր անուններով: 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Վայոց ձոր գավառի 92 գյուղերի ցուցակում Կեչուտը նշում է Երերունք:

Գյուղի մեջ մինչև անցյալ դարի 20-ական թվականները պահպանվել էին երեք եկեղեցիներ:

Կեչուտի բնակիչները հայեր են, որոնց նախնիների մի մասը տարբեր ժամանակներում այստեղ են տեղափոխվել Նախիջևանի Զնաբերդ և Զանգեզուրի տարբեր գյուղերից: Նրանք հիմնականում զբաղվում են հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ:

Գյուղն ունի հիմնական դպրոց:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Կեչուտ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 30 հուշարձան: